## *ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

## *ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Պատվիրատուն՝ ՀՀ Գյուղատնտեսության նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեի «Սևան-Հրազդանյան-Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը գտնվում է ք. Երևան, Ա. Արմենակյան 125 հասցեում, ստորև ներկայացնում է **«ՀՀԳՆՋՏՊԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՍՀՋ-22»** ծածկագրով շրջանակային համաձայնագրերի ընթացակարգի արդյունքում 2015թ. հոկտեմբերի 9-ին կնքված **ՀՀԳՆՋՏՊԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՍՀՋ-22-01** պայմանագրում 2015թ հոկտեմբեր 29-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

*Փոփոխության պատճառ:* Վաճառողի մոտ առաջացել է ապրանքների մատակարարման ժամկետի ավելացման անհրաժեշտություն:

*Փոփոխության նկարագրություն*: Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետը երկարաձգվել է 20 օրով, քանի որ արտադրող ընկերության մոտ ի հայտ են եկել տեխնիկական խնդիրներ: Համապատասխանաբար փոփոխվել են նաև վճարման ժամկետները:

*Փոփոխության հիմնավորում:* Սույն փոփոխությունը կատարվում է՝ հիմք ընդունելով պայմանագրի 9.4 կետը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշման 71-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին: Պայմանագրում փոփոխություն կատարվում է առաջին անգամ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող Կամո Բարսեղյանին:

*Հեռախոս*՝ 010 -65- 15-11 (16):

*Էլ. փոստ*՝ sevan_hr.gnum@mail.ru :

*Պատվիրատու*՝ ՀՀ Գյուղատնտեսության նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեի

«Սևան-Հրազդանյան-Ջրառ» ФԲԸ